13.qxd 25/06/2025 17:10 Page 1

ԳԵՂԱՄԱ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 25 հունիսի 2025թ. թիվ 13 (617)

ԲԱՑՎԵՑ ԵՎ ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք գյուղում, ձեռամբ Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանի եւ աղոթակցությամբ թեմի հոգեւոր դասի, վերաօծվեց եւ բացվեց Սուրբ Մեսրոպ եկեղեցին:



Եկեղեցու վերաօծման եւ բացման արարողությանը մասնակցեցին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, ՀՀ ՁՈՒ բանակային երկրորդ կորպուսի հրամանատար Գարեգին Պողոսյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Վարդենիս համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, պաշտոնական այլ անձինք, Ակունքի եւ հարակից բնակավայրերի բնակիչներ:

Վերաօծման արարողությունից հետո Ակունքցիներին ողջույնի ու շնորհավորանքի խոսքեր հղեցին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ միաժամանակ իրենց երախտագիտությունը հայտնելով եկեղեցու վերակառուցման ու վերականգնման հովանավոր ակունքցիներին:

Ակունքի Սուրբ Մեսրոպ եկեղեցին կառուցվել է 15-17-րդ դարերի ընթացքում, գործել է մինչեւ 1930-ական թվականները: Խորհրդային տարիներին այն վերածվել է կոլխոզի պահեստի, ապա ժամանակի ընթացքում դարձել լքված շինություն:

Շուրջ ինը տասնամյակ անց, շնորհիվ Ակունքի վարչական ղեկավար Նիկոլա Խաչատրյանի, համայնքի նախկին ղեկավար Արծրուն Ղարիբյանի կազմակերպչական ջանքերի, Արթուր եւ Արա Թադեւոսյան եղբայրների, մյուս ակունքցիների ներդրած միջոցների, կրկին ղողանջեցին նորակառույց զանգակատան զանգերը: Կատարվեց նաեւ կնունքի եւ մատաղի արարողություն:

Հոգեւոր երգերի կատարմամբ հանդես եկան Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցու երգչախմբի սաները:

Գեղարքունյաց թեմի առաջնորդի հավաստմամբ՝ Ակունքի Սուրբ Մեսրոպ վերաօծված եկեղեցին դարձավ 35-րդ հավատի տունը, որը Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր Գեղարքունյաց թեմում հավատավորների առջեւ բացեց իր դռները:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ անցկացվող «Արհեստների միջազգային փառատոնը», որը յուրաքանչյուր տարի անց է կացվում Հայաստանի մարզերից մեկում, այս տարի ժողովրդական արհեստագործության ոլորտի լավագույն վարպետներին համախմբել էր Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում:

Միջոցառումն անցկացվել է «Երիտասարդները ստեղծում են համը. խոհարարություն եւ արհեստներ» խորագրի ներքո:

Փառատոնի պաշտոնական բացման եւ ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը եւ Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

Փառատոնն իրականացվել է Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի կողմից, իսկ միջոցառումները ներառել են են հայ եւ օտարազգի վարպետների ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք, ավանդական համեղ ուտեստներ, խոհարարական մրցույթներ, լարախաղացի ներկայացումներ, ֆոտոանկյուն, ավանդական երգ ու պար, թաղիքե գորգի ստեղծում, ավանդական խաղեր, թանգարանային ցուցադրություններ, վարպետության դասեր, ինչպես նաեւ համերգներ:

Փառատոնի առաջին օրը հյուրերին գեղագիտական հաճույք են պատճառել «Ethno Colors» երաժշտական խմբի անդամները, իսկ երկրորդ օրը կայացել է «Գամմա» բենդի համերգը:

Ալվարդ Մանուկյան

ՓԱՌԱԿԱՆՔ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԾՈՎԻՆԱՐ

Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի վարչական տարածքում, բնակավայրից մոտ 10 կիլոմետր դեպի հարավ, Վարդենիսի լեռնաշթայի փեշին են տարածվում 76 տարի առաջ լքված Վերին Ծովինար կամ Փառականք գյուղի ավերակները, նաեւ՝ կիսավեր Պողոս-Պետրոս եկեղեցին ու պատմական գերեզմանոցի խաչքար-տապանաքարերը:

Այս բնակատեղին, թերեւս, ուսումնասիրման լուրջ կարիք ունի, որքան էլ որ հայ մի շարք հեղինակներ ինչ-որ չափով անդրադարձել են նրա պատմությանը:

Դժվար է ճշգրտել Փառականքի հիմնադրման ստույգ ժամանակահատվածը, թեեւ գրավոր հիշատակությունները եւ տարածքում պահպանված խաչքարերը փաստում են, որ այս գյուղը գոյություն է ունեցել դեռեւս 9-10-րդ դարերում եւ որոշակի ընդմիջումներով շարունակվել մինչեւ 1949 թվականը: Չի բացառվում սակայն, որ Փառականքը եղած լինի Հայաստանի ամենահին կամ հնագույն բնակավայրերից մեկը, որտեղ մարդիկ ապրել ու արարել են մի քանի հազարամյակ շարունակ, ինչպես որ Սեւանա լճի ավազանի հարյուրից ավելի բնակավայրերի դեպքում է:

Փառականքի մասին հիշատակել են միջնադարյան հայ նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, հայ եկեղեցու անվանի գործիչ, վավերագրող Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, հայտնի հնագետներ Երվանդ Լալայանը եւ Սեդրակ Բարխուդարյանը:

Ստեփանոս Օրբելյանը Փառականքը հիշատակում է Գեղարքունիք գավառի բոլոր այն գյուղերի ցանկում, որոնք հարկատու էին Տաթեւի վանքին: Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանցն այս գյուղի մասին թողել է այսպիսի հիշատակություն՝ այն կոչելով Կարմիր խաչեր կամ Վաղավեր. «Քյոլաղռան գյուղից 4-5 վերստ հեռավորությամբ, հարավարեւելյան կողմում կա մի ավերակ գյուղատեղ, ուր կա մի հին եկեղեցի՝ երկու խորաններով, որ ծածկված են տափարակ սալքարերով, իսկ եկեղեցվո որմունքն են միայն կանգուն, որո շրջապատը կան գեղեցիկ քանդակներով խաչքարեր եւ գերեզմանաքարեր, որոնց վրա երեւում են գրվածքներ: Մի տապանաքարի վրա գրված էր այսպես. «Իմ որդի Տաճատի հարսանիքին գործադրվեցավ երեք խալվար ալյուր, մի խալվար աղ, հինգ եզն եւ տաս ոչխար, երեք կարաս գինի եւ մի կարաս օղի, Սոդից մինչեւ Գավառն Գեղարքունին հրավիրված էին հարսանիք, ով մեզանից քաջ է, թող այսպես հարսանիք անե որդվոյն. Միր Ամիր»: Հիշյալ ավերակ գյուղատեղվո եկեղեցվո մոտ կան նաեւ կարմրագույն քարից խաչքարեր, եւ այս պատճառով գյուղատեղս անվանվում է Կարմիր խաչեր, որո հին անունը ըստ ակնարկության մի հին խաչքարի արձանագրության, եղել է Վաղավեր»,- գրում է Սմբատյանցը:

Մեսրոպ Սմբատյանցի կողմից Գեղարքունիքի մարզում ձեռնարկած ուսումնասիրությունների ժամանակահատվածում, որը սկսվել է 1862 թվականից ու ավարտվել 1895 թվականին, Վերին Ծովինարը կամ Փառականքը եղել է անմարդաբնակ, իսկ ահա Երվանդ Լալայանի ձեռնարկած ուսումնասիրության ընթացքում, 1910-ական թվականներին արդեն այն եղել է բնակեցված:

«Վերին Քյոլաղռան կամ Կարմիր Խարապա. գտնվում է Քյոլաղռան գյուղից 2 կիլոմետր հեռու, դեպի հարավ-արեւելք, մի հին գյուղատեղում, ուր կա մի կիսավեր եկեղեցի եւ բավականաչափ կարմիր խաչքարեր, որոնցից մեկի վրա արձանագրված է եղել, ըստ Սմբատյանցի, «Իմ որդի Տաճատի հարսանիքին...»: Վերոնշյալ արձանագրությունը ես չկարողացա գտնել, իմ տեսած խաչքարերից ամենաուշագրավը գտնվում է եկեղեցու մեջ, ծածկված է գեղեցիկ քանդակներով եւ թիկունքին կրում է հետեւյալ արձանագրությունը. «Ածով մեք Դավիթ էրէցս եւ որդիքս Սուլթան ղուլի եղիշի թոռն Ղալամին, որ ենք ծնունդս Սարու Ամիճանին, որ բազում ջանիւ եւ հնարիւ բերել սարնդահանայ արեւի սարին ջուրն Դախծն գթայ շինոյ շինեաց բ. ջաղաց եթող հօրն իմ, քերծն ընդոց»: Մի ուրիշ խաչքարի վրա էլ գրված է. «Ած ողորմի Սուլթան Ղուլիին»: Հավանական է , որ այս գյուղատեղին հին Վաղավեր գյուղը եղած լինի: Բնակիչները 1890 թվականին Քյոլաղռանից /Ծովինարից/ գաղթած հայեր են, ընդամենը 22 տուն, 101 արական, 98 իգական՝ 199 հոգի»,-գրել է Երվանդ Լալայանը:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

13.qxd 25/06/2025 17:10 Page 2

ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ 6 ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔ ԽԼԵՑ

Հունիսի 11-ի առավոտյան գազի արտահոսքի հետեւանքով նախ պայթյուն, ապա փլուզում է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի բազմաբնակարան շենքերից մեկում, ինչի հետեւանքով զոհվել են վեց , վիրավորվել տասից ավելի քաղաքացիներ:

Աղետից անմիջապես հետո դեպքի վայր են ժամանել ու փրկարարական գործողություններ ձեռնարկել ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության փրկարարները, ովքեր ողջ ցերեկվա ընթացքում կարողացել են մաքրել փլատակները եւ այնտեղից դուրս բերել 1937 թվականին ծնված Ռոզա Վարդանյանի, 1949 թվականին ծնված Ռիտա Սարգսյանի, 1935 թվականին ծնված Ռոզա Մովսիսյանի, 1963 թվականին ծնված Հրաչյա Լազարյանի, 1971 թվականին ծնված Արթուր Սարգսյանի դիերը եւ վիրավորում ստացած անձանց: Հաջորդ օրը հիվանդանոցում մահացել է նաեւ փլուզումից տուժած Կարապետ Կարինյանը:

Պայթյունի հետեւանքով հոսպիտալացվել է 11 անձ, որոնցից 3-ը տեղափոխվել են մայրաքաղաքի բուժհաստատություններ: Տուժածների առողջական վիճակը գնահատվել է միջին ծանրության, բոլորը ստացել են համապատասխան բուժօգնություն:

Ճամբարակում տեղի ունեցած գազի պայթյունի կապակցությամբ Ներքին գործերի ու Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունները համատեղ իրականացրել են իրավիճակից բխող անհրաժեշտ գործողություններ:

Միջգերատեսչական մակարդակով, մարզային եւ համայնքային իշխանությունների ներգրավմամբ, աշխատանքներ են տարվել տարբեր, այդ թվում՝ շենքի բնակիչների կարիքների գնահատման, անհրաժեշտ դեղորայքի, սննդի, կարիքն առաջանալու դեպքում կացարանով ապահովելու, պատահարի հետեւանքների չեզոքացման եւ այլ առաջնային ուղղություններով:

Տեղում որոնողափրկարարական աշխատանքները, որոնց ներգրավված են շուրջ 230 փրկարարական ծառայողներ եւ ոստիկաններ, ղեկավարել է ՓՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության տնօրեն, ՆԳ նախարարի տեղակալ Կամո Ցուցուլյանը:

Աղետի հետեւանքների վերացման կապակցությամբ մարզպետ Կարեն Սարգսյանը հրատապ աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել Ճամբարակում:

Մարզպետի որոշմամբ անմիջապես ստեղծվել է կարիքները գնահատող աշխատանքային խումբ, որն այդ ու հաջորդ օրերին աշխատել է դեպքի վայրում:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի եւ Ճամբարակի համայնքապետարանի ուժերով աշխատանքային խումբը իրականացրել է վթարված շենքի բնակիչների տեղավորման, կացարաններով ապահովման աշխատանքներ, կազմակերպել նրանց սննդի, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ դեղորայքով ապահովման աշխատանքներ:

Մարզպետի կողմից հանձնարարվել է նաեւ՝ որոնողական աշխատանքներում ներգրավել հավելյալ շինտեխնիկա՝ փրկարարական եւ վերականգնողական աշխատանքներին օժանդակելու նպատակով:

«Գեղամա աշխարհ»

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐԸ

Հունիսի 10-ից Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում ցուցադրության են ներկայավել 2024 թվականի ամռանը Մարտունի համայնքում ՀՀ Նկարիչների միության անդամ Արամայիս Խլղաթյանի նախաձեռնությամբ անցկացված գեղանկարչական սիմպոզիումի արդյունքում ստեղծված 47 կտավները:

ՀՀ նկարիչների միության անդամներ Հրանտ Թադեւոսյանի, Արմեն Լորենցի, Շահեն Օրդուբեկյանի, Հովնան Սեւոյանի, Սամվել Մարտիրոսյանի, Մաթեւոս Սարգսյանի, Վլադիմիր Սիմոնյանի, Դավիթ Դավթյանի, Լեւոն Խաչատրյանի, Արամայիս Խլղաթյանի, Մելքոն Հովհաննիսյանի, գեղանկարիչներ Աշոտ Խաչատրյանի, Մարիամ Գալստյանի, Հասմիկ Նազարյանի, Հասմիկ Միերյանի, Հրայր Խլղաթյանի եւ Ռուզաննա Նավոյանի հեղինակած կտավները պատկերում են Մարտունի համայնքի բնաշխարհը Մադինա գյուղում, Վարդենիկի Իշխանաձորում ու Մարտունու Մթնաձորում:

Գեղանկարչական սիմպոզիումը կազմակերպվել է Մարտունու համայնքապետարանի ֆինանսական միջոցներով: Սիմպոզիումի արդյունքում ստեղծված կտավները սեփականության իրավունքով հանձնվել են Մարտունու համայնքապետարանին:

Կտավները Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում ցուցադրության կմնան մեկուկես-երկու ամիս: Դրանք ցուցադրության կներկայացվեն Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հիմնարկների, մարզի համայնքապետարանների աշխատակազմերի, կրթամշակութային հաստատությունների աշխատակիցներին, հանրակրթական դպրոցների աշակերտներին:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԸ

Գավառ քաղաքի Միքայելյան փողոցում արդեն մեկնարկել եւ ընթանում են հիմնանորոգման աշխատանքները ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, Գավառի Միքայելյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 435 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Միքայելյան փողոցի եւ նույն փողոցի վրա գտնվող թիվ 16, 18, 20 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում՝ 1,5 կիլոմետր երկարությամբ, 7000 քառակուսի մետր մակերեսով եւ մայթերի ու ջրահեռացման ներքին համակարգի կառուցում:

Աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել 2025 թվականի ընթացքում:

Աշխատանքներն իրականացնում է Գավառի «ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում արդեն շուրջ երկու ամիս է, ինչ սկսվել եւ ընթանում են ճանապարհաշինական աշխատանքներ ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի առաջին փուլի՝ Սեւան քաղաքի շուրջ մեկտասնյակ փողոցների հիմնանորոգումը մեկնարկել է Իսահակյան, Օրբելի, Կարմիր բանակի, Սպանդարյան փողոցներից, որտեղ իրականացվել եւ ընթացքի մեջ են քանդման, հողային, ճանապարհային պատվածքի, ուղիների եւ մուտքերի, մայթերի հիմնանորոգման, դիտահորերի պատերի ամրացման, կափարիչների, եզրաքարերի, եզրաշարերի, նոր մետաղական խողովակների տեղադրման, ջրամեկուսացման, ջրհավաք հորերի իրականացման եւ այլ բնույթի աշխատանքներ:

Հիշյալ փողոցներին կհաջորդի Գեղամա, Ռուսական, Աբովյան, Սայաթ-Նովա, Սյունյաց փողոցների հիմնանորոգումը: Հիմնանորոգումն ընդգրկում է 39657 քառակուսի մետր տարածք:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 628 միլիոն 990 հազար 550 դրամ է, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Ճան-Շին» ՍՊԸ-ն:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՍԿՍՎԵԼ ԵՆ ՋՐԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

2025 թվականի հունիսի առաջին տասնօրյակից ոռոգման նպատակներով Սեւանա լճից Հրազդանի հունով սկսվել են ջրբացթողումները:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով՝ 2025 թվականի հունիսի 24-ի դրությամբ ոռոգման նպատակներով Սեւանա լճից արդեն բաց է թողնվել 29 միլիոն 687 հազար խորանարդ մետր ջուր: Իսկ այս տարվա հունվարից մինչ հունիսի 24-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 93 միլիոն371 հազար խորանարդ մետր ջուր:

Հունիսի 24-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 70 սանտիմետր բարձրության վրա, ինչը 6 սանտիմետրով բարձր է մնում նախորդ տարվա նույն օրվա նիշից:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ Է 16 ՀԱԶԱՐ 158,3 ՀԵԿՏԱՐ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

Գեղարքունիքի մարզի գյուղացիական տնտեսություններում 2025 թվականի հունիսի 10-ի դրությամբ ավարտվել է գարնանացանը: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պաշտպանության վարչությունից, համայնքերից ստացված ամփոփ տվյալների համաձայն, կատարվել է 16 հազար 158,3 հեկտար գարնանացան, որից 3907, 3 հեկտարը՝ Գավառում, 1161,8 հեկտարը՝ Սեւանում, 3687,3 հեկտարը՝ Մարտունիում, 6654 հեկտարը՝ Վարդենիսում եւ 747, 87 հեկտարը՝ Ճամբարակում:

Ցանվել է 7708 հեկտար գարի, 5564,7 հեկտար կարտոֆիլ, 688,7 հեկտար գարնանացան ցորեն, 16 հեկտար եգիպտացորեն, 283,3 հեկտար վարսակ, 128,5 հեկտար այլ հացազգի մշակաբույսեր, 213,7 հեկտար լոբի, 20 հեկտար ոսպ, 25 հեկտար սիսեռ, 147 հեկտար ոլոռ, 698, 34 հեկտար բանջարեղեն, 650,6 հեկտար բազմամյա կերային մշակաբույսեր, 6 հեկտար այլ կերային մշակաբույսեր եւ 8,5 հեկտար կտավատ:

Աշնանացան ցորենի ցանքերը կազմում են 10 հազար 294,1 հեկտար, որոնք հաջող են ձմեռել ու կենսունակ են հետագա աճի ու զարգացման համար: Այլ խոսքով՝ Գեղարքունիքի մարզում այս տարի բերիք տակ է 26 հազար 459,1 հեկտար ցանքատարածություն:

13.qxd 25/06/2025 17:10 Page 3

ԳԱՎԱՌՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՀԵՐՈՍ-ՔԱՂԱՔ ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գավառ- Նովոռոսիյսկ եղբայր քաղաքների համագործակցության շրջանակներում Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Հերոս-քաղաք Նովոռոսիյսկի պաշտոնական պատվիրակությանը՝ քաղաքապետ Անդրեյ Կրավչենկոյի գլխավորությամբ:

Պատվիրակության կազմում էին Նովոռոսիյսկ քաղաքի հայկական ազգային մշակութային «Լույս» հասարակական կազմակերպության նախագահ, Կուբանի աշխատանքի հերոս, Կրասնոդարի երկրամասի հասարակական պալատի անդամ Վլադիմիր Մխիթարյանը, ՌԴ Կրասնոդարի երկրամասի՝ «Ռուսաստանում հայերի միության» համառուսական հասարակական կազմակերպության շրջանային բաժանմունքի նախագահի տեղակալ Գեորգի Պողոսովը, պաշտոնատար այլ անձինք:

Համայնքապետրանում պատվիրակությանը աղ ու հացով դիմավորելուց հետո համայնքի ղեկավարն իր աշխատասենյակում անվանական արծաթե հուշամեդալներ է հանձնել Անդրեյ Կրավչենկոյին, Վլադիմիր Մխիթարյանին եւ Գեորգի Պողոսովին:

Անդրեյ Կրավչենկոն իր հերթին Գուրգեն Մարտիրոսյանին է փոխանցել խորհրդանշական հուշանվերներ:

Կողմերը քննարկել են բարեկամ քաղաքների հետագա համագործակցության հարցեր:

Գուրգեն Մարտիրոսյանը եւ Անդրեյ Կրավչենկոն շրջել են Գավառ քաղաքում, ծանոթացել քաղաքի պատմությունը խորհրդանշող պատմամշակութային արժեքներին:

Այնուհետեւ Գավառի Սամվել Քոչարյանցի պուրակում տեղի է ունեցել Նովոռոսիյսկ քաղաքի հիմնադիրներից մեկի՝ Լազար Մարկոսի Սերեբրյակովի հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը: Վերջինս ծագումով հայ է, ռուսական նավատորմի ծովակալ, մեծ է նրա ներդրումը Սեւծովյան նավատորմի եւ քաղաքաշինության զարգացման գործում:

Հուշատախտակի բացման արարողությունն ուղեկցվել է ելույթներով, որոնցում ընդգծվել են Գավառ-Նովոռոսիյսկ եղբայր քաղաքների բարեկամական հարաբերությունները՝ հայ-ռուսական գործակցության համատեքստում: Ի նշան երկու քաղաքների բարեկամության՝ պուրակում նաեւ ծառ է տնկվել:

Այցելություն է կատարվել նաեւ Գավառ համայնքի Հայրենական Մեծ պատերազմի միակ վետերան, սարուխանցի 103-ամյա Մեխակ Ավետիսյանին:

Ալվարդ Մանուկյան

ԱՐՓԻ ՍԻՆԱՆՅԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՄՐՑԱՆԱԿԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՄ

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակադեմիական վոկալ բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Արփի Սինանյանն այս տարվա հունիսի 2-ից 7-ին Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում մասնակցել է Ստանիսլավ Մոնյուշկոյի անվան միջազգային 12-րդ մրցույթին եւ նվաճել երկրորդ պատվավոր տեղը:

Հեղինակավոր մրցույթին մասնակցել են ավելի քան 80 օպերային երգիչներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Մրցույթի 3 փուլերը հաջողությամբ հաղթահարել են Հայաստանը ներկայացնող Արփի Սինանյանը եւ Ալեքս Դավեյանը: Մեր հայրենակիցները եզրափակիչ փուլում 4 մրցանակակիրների մեջ գրավել են երկրորդ եւ երրորդ տեղերը:

Մրցույթի արդյունքները վերլուծել եւ Արփի Սինանյանին որպես «հայտնություն, բացառիկ դրամատիկ սոպրանո, ադամանդ» են որակել ճանաչված երաժշտական քննադատները, ովքեր նշել են 22-ամյա երգչուհու բարդագույն երգացանկը, հասուն կատարումը, բեմական վարպետությունը:

Արփի Սինանյանը Երեւանի Կոնսերվատորիայի լավագույն ուսանողներից է եւ անվանական կրթաթոշակառու: Սովորել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Օլգա Գաբայանի դասարանում: Միաժամանակ, ընդգրկված է «Երիտասարդ օպերային երգիչներ» ծրագրում եւ խորացնում է գիտելիքները իր գործի գիտակ, նվիրյալ արվեստագետ Լեւոն Ջավադյանի ղեկավարությամբ:

Արփի Սինանյանը մեկ տարի առաջ երկրորդ մրցանակ է նվաճել Իտալիայում կայացած միջազգային մրցույթում: Նա արմատներով Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքից է:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ԵՎ ՄՍԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունու համայնքապետարանում հանդիպել է համայնքի սպանդանոցների տնօրեններին եւ մսավաճառներին: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, հանդիպմանը մասնակցել է նաեւ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են անասնամթերքի արտադրության եւ իրացման գործընթացում կիրառվող պահանջները, կենդանիների մորթի վերահսկման մեխանիզմները, ինչպես նաեւ՝ առկա խնդիրներն ու առաջարկվող լուծումները:

Կարեն Սարգսյանը շեշտել է, որ անասնամորթը պետք է կատարվի բացառապես սպանդանոցներում՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող սանիտարահիգիենիկ եւ օրենսդրական կարգավորումների: Նա ընդգծել է, որ խստորեն պետք է արգելել անկանոն մորթը եւ անօրինական իրացումը, ինչը վտանգ է ներկայացնում սպառողների առողջության համար:

Հանդիպման ավարտի մարզպետը հորդորել է ոլորտի ներկայացուցիչներին՝ ցուցաբերել պատասխանատվություն, հետեւել օրենքի պահանջներին եւ խուսափել խախտումներից:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում 2025 թվական հունիսի սկզբից մեկնարկել եւ ընթանում են ասֆալտապատ փողոցների վնասված հատվածների փոսային նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունու ասֆալտապատ փողոցների վնասված հատվածների փոսային նորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 45 միլիոն դրամ, որը հատկացվել է տեղական բյուջեի միջոցներից: Նախատեսված է փոսային նորոգման աշխատանքներ իրականացնել Մարտունի համայնքի բոլոր բնակավայրերում՝ Մարտունի քաղաքում, Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Զոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն, Գեղհովիտ, Մադինա, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Լիճք, Ծակքար, Ծովասար, Զորագյուղ, Վարդաձոր, Երանոս գյուղերում:

2025 թվականի հունիսի 18-ի դրությամբ աշխատանքներն իրականացված են շուրջ 60 տոկոսով:

Աշխատանքները կավարտվեն առաջիկա 10-15 օրերի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂՀՈՎԻՏ ԵՎ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇԱԿԻ ՎՆԱՍՆԵՐ ԵՆ ԿՐԵԼ ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ԵՎ 10-ԻՆ ՏԵՂԱՑԱԾ ԿԱՐԿՈՒՏՆԵՐԻՑ



Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ եւ Լիճք համայնքների առանձին տնտեսություններ վնասներ են կրել 2025 թվականի հունիսի 6-ին եւ 10-ին տեղացած կարկուտների պատճառով:

Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնից ստացված նախնական տվյալներով՝ հունիսի 6-ին Գեղհովիտ գյուղում տեղացած կարկտի հետեւանքով վնասվել է 1 հեկտար պտղատու այգի, 6 հեկտար լոբու ցանք: Շուրջ 50 տոկոսով վնասվել են պտղատու այգիները, 90 տոկոսով՝ լոբու ցանքերը:

Հունիսի 10-ին Լիճքում տեղացած կարկուտը վնասել է 11 հեկտար պտղատու այգի, 13 հեկտար կարտոֆիլի, 2 հեկտար սխտորի, 1 հեկտար լոբու ցանքեր: Շուրջ 80 տոկոսով վնասվել են պտղատու ծառերը, 70 տոկոսով՝ կարտոֆիլի եւ սխտորի, 90 տոկոսով՝ լոբու ցանքերը:

Վնասի չափերը ճշտվում են գերատեսչական համապատասխան հանձնաժողովների կողմից:

«Գեղամա աշխարհ»

13.qxd 25/06/2025 17:10 Page 4

ՓԱՌԱԿԱՆՔ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԾՈՎԻՆԱՐ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Գյուղի պատմությանն առավել մանրամասն ու ծավալուն անդրադարձ է կատարել Սեդրակ Բարխուդարյանը՝ իր «Դիվան հայ վիմագրության» աշխատության մեջ կատարելով չափազանց կարեւոր ու համոզիչ ուղղումներ:

Ըստ Բարխուդարյանի՝ գյուղի Վաղավեր անունը սխալ է մատնանշված թե՛ Սմբատյանցի, թե՛ Լալայանի մոտ՝ այստեղ պահպանված մի տապանաքարի վրա եղած արձանագրության թյուրըմբռնման պատճառով: Ու տպավորություն է, որ երկու հեղինակներն էլ Փառականքում անձամբ չեն եղել, այլ հիմնվել են այլ մարդկանց տված տեղեկությունների վրա: Հետաքրքիր է, որ Սմբատյանցը Փառականքի տեղանքը նշում է Ծովինարից 4-5 վերստ, Լալայանը՝ 2 կիլոմետր դեպի հարավ-արեւելք, մինչդեռ այդ հեռավորությունն իրականում շուրջ 10 կիլոմետր է:

Հիմա խոսքը տանք Սեդրակ Բարխուդարյանին: «Այս գյուղի անունը մոռացված է եղել: Այն վերականգնելու տեղադիր հեղինակների փորձերն էլ ավելի մեծ շփոթություններ են մուծել հարցի մեջ: Այժմ անմարդաբնակ այս գյուղը Սմբատյանցն անվանում է Կարմիր Խաչեր, իսկ հին անունը՝ Վաղավեր, Լալայանը՝ Կարմիր Խարապա եւ Վաղավեր: Թե՛ նոր, թե՛ հին այդ անունները սխալ են:

Կարմիր Խարապա գյուղատեղը գտնվում է սրանից 15-20 կիլոմետր արեւելք, Կարճաղբյուր գյուղի հանդում եւ մոտ է Մաքենյաց վանքին, որը մեր որոշմամբ Գթաշեն գյուղն է: Հնում գոյություն ունեցող Վաղավեր տեղանվան հետ նույնացնելուն հիմք է ծառայել իբր այս ավերակների մեջ գտնվող մի տապանաքարի վրա ընթերցված Վաղավեր անունը:

Նախ նշենք, որ Ստեփանոս Օրբելյանի ցուցակում նշված Վաղավեր տեղանունը Սոդից գավառի մեջ է

եւ ոչ Գեղարքունի, ապա այն, որ այդ եզրակացության հիմք-տապանագիրը Սմբատյանցն ու Լալայանը չեն հրապարակել, ինչպես եւ առհասարակ Վերին Քյոլաղռանից ոչ մի արձանագրություն չի հրատարակված մինչ այժմ, մի երեւույթ, որ թելադրում է ենթադրել, որ նրանք չեն այցելել այդ վայրը, այլ որեւէ «տիրացուի» խոսքի հիման վրա է առաջացել այս շփոթմունքը եւ հետեւյալ կերպ: Փառականքի գերեզմանատան մի տապանագիրը հաղորդում է. «Այս է հանգիստ Ռիվանին, որդի Զալալին, Վաղաթնու եկօ տեղս կամեր գնալ տեղն յուր հանգստի ի Քրիստոս. Թվ. 1678»: Ահա այս Վաղաթին անվան սխալ վերծանումը եղել է շփոթմունքի պատճառը, մանավանդ կոտրված տապանաքարի ընդհանուր բովանդակությունից, ուր ասված է, թե Ռիվանը եկվոր է: Վերջին հանգամանքը տարբեր առումներով հետաքրքիր է, մանավանդ որ այժմ էլ Սիսիանի շրջանում գոյություն ունեցող հին Վաղաթին գյուղի մոտերքից՝ Գորեսից, մի ուրիշն էլ է եկել Փառականք՝ պարոն Լալը, որը Մելիք Տաթյուի որդին է եւ մեռել է ողբերգական մահով: Այս գյուղի անունը հնարավոր է վերականգնել բոլորովին այլ ճանապարհով: Այս գյուղը եղել է մելիքանիստ, առնվազն այստեղ են նստել 14-րդ դարի վերջերից Գեղարքունիք գավառի մելիքական տոհմերից Աղբուղայանները կամ Պուղիկյանները, որոնց տոհմի գերեզմանները, այն էլ մի քանի սերնդի, գտնվում են



այստեղի գերեզմանատան մեջ: Այս տոհմի բազմաթիվ տապանագրերից ու այլ աղբյուրներից երեւում է, որ ամենանշանավոր մելիքը եղել է Թանկրիղուլին, որը Գեղարքունիքի տանուտերերի ու մելիքների հետ ստորագրել է 1513 թվականի այն փաստաթուղթը, որով Գեղարքունիք գավառը հաստատվում է Տաթեւի վանքի թեմի մեջ: Եթե այս փաստաթղթում Թանկրիղուլու ստորագրությունը երկրորդ տեղն է գրավում, ապա Տաթեւի վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային եւ արեւելյան պատերի մեջ արված արձանագրության մեջ Թանկրիղուլին առաջին ստորագրողն է: Այդ արձանագրությունը որոշում է, որ Գեղարքունիքի եւ Սոթքի գավառի գյուղերը պարտավորում են Տաթեւի վանքին, որպես լուսացու վառելիք երկու կապալ ձեթ տալ:

1532 թվականին գրված այս արձանագրության զգալի մասի քարերը թեեւ թափվել-կորել են, բայց Թանկրիղուլու անունը պահպանվել է, եւ ընդհանրապես այդ արձանագրությունն ունի այն առավելությունը, որ մի քանի ստորագրողների անվան դիմաց նշվել է նրանց գյուղերի անունները: Թանկրիղուլու անվան դիմաց մնացել է մի տեղանվան մաս՝ Փառկուն, որն առանց տատանվելու կարող ենք լրացնել՝ Փառկունեցի:

Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ պահպանված Գեղարքունիք գավառի գյուղերի ցանկում կա Փառականք գյուղը, որը «Զամբռի» մեջ Մաքենյաց վանքի վիճակի գյուղերի ցանկում գրված է Փառակունիք ձեւով:

Այս գյուղի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Արատեսի վանքի պատին գրված մի ընդարձակ արձանագրության մեջ, ըստ որի, Ստեփանոս Օրբելյանն այդ վանքին է նվիրում Գեղարքունիքի իր սեփական վիճակից ութ գյուղ, որոնց մեջ նշված է նաեւ Փառակունիքը: Այդ բոլոր ութ գյուղերը գտնվել են իրար կողքի, ներկայիս Մարտունու շրջանում: Այս գյուղն այժմ անմարդաբնակ է, գյուղատեղում պահպանվել են արձանագրություն ունեցող հետեւյալ հուշարձանները.

Ա. Հին գերեզմանատան մնացորդներ, մեկը՝ եկեղեցուց հարավ-արեւմուտք, մյուսը՝ հարավ-արեւելք, երկու տեղում էլ կանգնած են 12-13-րդ դարերի խաչքարեր:

Բ. Եկեղեցի, որ այժմ փայտածածկ շենք է, նորոգված ալաշկերտցի գաղթականների կողմից: Հյուսիս-արեւմտյան անկյունում, պատկից, կա մի փոքրիկ մատուռ, ավելի հին, որը շենքի վերանորոգման ժամանակ հարմարեցրել են որպես խորան եւ եկեղեցուց մուտք բացել նրա մեջ: Այստեղ կան 9-10-րդ դարերի արձանագիր խաչքարերի բեկորներ միայն, իսկ եկեղեցու պատերի ու ավագ խորանի ճակատին ագուցվել են 14-17-րդ դարերի խաչքարեր, մի քանիսն՝ արձանագիր:

Գ. Մեծ գերեզմանատուն: Տարածված է եկեղեցու հյուսիսում: Այստեղ կան բազմաթիվ խաչքարեր եւ տապանաքարեր, մեծ մասամբ հմուտ վարպետների ձեռքերով շինված: Առանձնապես հետաքրքիր են տապանաքարերի վրայի կենցաղային քանդակները՝ իրենց բազմազանությամբ ու հմուտ կատարումով: Այս գերեզմանատան մեջ կան Պուղիկյան մելիքական տոհմին պատկանող բազմաթիվ հուշարձաններ, իսկ Մելիք Թանկրիղուլու ընտանիքինը գտնվում է գերեզմանատան արեւմտյան եզրին՝ եկեղեցու պատի մոտ: Մեր կողմից վերծանված է 41 արձանագրություն, որոնք մինչ այժմ հրատարակված չեն եղել»,-գրում է Սեդրակ Բարխուդարյանը:

Եթե Բարխուդարյանը Վերին Ծովինարը կամ Փառակունիքը նշում է որպես անմարդաբնակ գյուղ, ապա նշանակում է, որ նա այս բնակավայրի հուշարձաններ է այցելել 1950-1960-ական թվականներին, երբ նրա բնակիչները ՀԽՍՀ մինիստրների խորհրդի որոշմամբ արդեն տեղափոխվել էին բնակության այլ վայրեր:

Սեդրակ Բարխուդարյանը նաեւ նշում է, որ Մեսրոպ Սմբատյանցի կողմից Փառականքում հիշատակված «Իմ որդի Տաճատի հարսանիքին...» բովանդակությամբ արձանագրություն տեղում չի գտնվել, իսկ ահա Երվանդ Լալայանի հիշատակած «Աստուծով մեք Դավիթ էրէցս եւ որդիքս Սոլթան ղուլի Եղիշի թոռն Ղալամին....» բովանդակությամբ արձանագրությունն ինքն անձամբ գտել ու վերծանել է Գթաշեն գյուղատեղի ավերակներում, որը Փառականքից գտնվում է 15-20 կիլոմետր հեռավորությամբ, Լճավան գյուղի մոտակայքում:

Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային պատից բացվող մուտքի շինությունը, որը համարվում է երկրորդ խորանը, ծածկված է հսկայական չափերի սալաքարերով:

Հնավայրի ամենաուշագրավ ու տպավորիչ հուշարձանը գտնվում է Պողոս - Պետրոս եկեղեցուց դեպի հարավ-արեւմուտք, հին գերեզմանատան մեջ: Այն մի հսկայական չափերի խաչքար է՝ մոտ երեքուկես մետր բարձրությամբ, ավելի քան 1,5 մետր լայնությամբ ու հոյակապ քանդակներով: Այն, կարելի է ասել, Գեղարքունիքի մարզի հազարավոր խաչքարերի մեջ առանձնանում է թե՛ իր մեծությամբ, թե՛ քանդակների շքեղությամբ: Նրա աջուձախ կողմերում կան կոտրված խաչքարաբեկորներ: Այս շքեղ հուշարձանի ստորին մասում, ձախ կողմի անկյունում արձանագրված է. «Յաշխարհակալություն Ապաղա Ղանին, ի պարոնություն Պռոշա, եպիսկոպոսության Տեր Գրիգորայ, ես, Մանուչա, կանկնեցի զխաչս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց: Յիշեցեք. թվ. 1273»:

Ինչպես պարզվում է, 13-րդ դարում այս գյուղը պատկանել է Պռոշյան իշխաններին, իսկ ահա հետագայում արդեն այն անցել է Օրբելյաններին՝ դառնալով Արատեսի վանքին հարկատու բնակավայր:

Մեկը մյուսից ոչ պակաս շքեղ ու գեղեցիկ են նաեւ մյուս խաչքար-տապանաքարերը, որոնց արձանագրությունները նաեւ արժեքավոր տեղեկություններ են պարունակում գյուղի պատմական անցուդարձերի, նրանում ապրող մարդկանց մասին: Ահա դրանց բովանդակությունը:

«Ես Մելիք Թանկրիղուլս, որդի Մելիք Ղուկասին, թոռն Աղբուղին, կանկնեցի խաչս ի փրկություն հոգվոյ իմոյ. թվ. 1451»:

«Ես Մելիք Թանկրիղուլս, կանկնեցի Սուրբ Խաչս ի փրկություն հոգվոյ պարոն Խոնծատին, որ է ամուսին իմ եւ դուստր մելիք Խուտայբախշին. թվ. 1466»:

«Թվ. 1521 Ի հօր իմ՝ Ղուկաս աղին կ. /60/ տարի մելիքություն արարե»:

«Սուրբ Խաչս բարեխոս Վասակ քահանային. թվ. 1547»:

«Այս է հանգիստ պարոն Ղասումին, որդի մելիք Թանղրիղուլին, թոռն մելիք Ղուկասին, որ փոխվեցավ ի Քրիստոս 1466 թվականին»:

Որոշ արձանագրություններում նկատելի են ողբերգական շեշտեր: «Այս է հանգիստ Լելիջանին, որդի Մելիք Թանկրիղուլին, թոռն մելիք Ղուկասին, որ Լ /30/ ամեայ փոխվեցավ ի Քրիստոս: Այս Բ /2/ եղբարք մահով մեռան թվ.1536»:

«Այս է հանգիստ Մելիքպեկին, որդի Ղուկաս Աղին, եղբայր մելիք Թանկրիղուլին, որ երեսնամեայ փոխվեցավ ի Քրիստոս, էթող սուք անմխիթար. թվ. 1457»:

Վիմագիր որոշ արձանագրություններ էլ փաստում են, որ Սյունյաց աշխարհի այլ գավառներից Փառականք բնակության եկել այլ ընտանիքներ, ու նրանց եկվոր լինելը շեշտվել է անգամ գերեզմանաքարերին: Ավելին, եկվորները թաղվել են տեղացիների շիրիմներից առանձնացված հատվածում, եկվոր Մուսահիբի ընտանեկան գերեզմանների շարքում:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

13.qxd 25/06/2025 17:10 Page 5

ԾԱԿՔԱՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են մի շարք փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծակքարի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազում է 147 միլիոն 968 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատմամբ հիմնանորոգել 5-րդ փողոցը, 7-րդ փողոցի 1-ին նրբանցքը, 8-րդ փողոցի 1-ին, 2-րդ փողոցի առաջին ու 4-րդ փակուղիները, 10-րդ փողոցից 6-րդ փողոցին միացվող ճանապարհահատվածը՝ 1875 մետր ընդհանուր երկարությամբ եւ 8437 քառակուսի մետր մակերեսով: Նախատեսված է նաեւ 200 մետր երկարության հենապատի կառուցում 7-րդ փողոցում, ջրահեռացման համակարգի տեղադրում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունիսի 10-ից, հենապատի կառուցմամբ, որի ավարտից անմիջապես հետո կձեռնարկվեն ճանապարհների հողային հարթեցման, ավազակոպճային հիմքի տեղադրման, որոշակի հատվածներում մետաղյա խողովակներով կամ կիսախողովակներով ոռոգման ու ջրահեռացման առուների կառուցման, ասֆալտապատման ու այլ կարգի աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել 2025 թվականի ընթացքում:

Շինարարությունն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԿԱՊԻՏԱԼ ՈՒ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ՆՈՐԱՏՈՒՍԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՆ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը կապիտալ ու ընթացիկ դրամաշնորհներ է հատկացրել Նորատուսի թիվ 2 մանկապարտեզին՝ հաստատությունում առկա խնդիրները կարգավորելու եւ աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով:

Հատկացումներն իրականացվել են Գավառ համայնքի 2024 թվականի բյուջեից: 1 միլիոն 110 հազար դրամ կապիտալ դրամաշնորհի շրջանակներում ձեռք են բերվել 2 հատ մանկական պահարաններ, 2 հատ գրասենյակային աթոռներ, նվագարկիչ, դարակաշար, փոշեկուլ, 2 աշխատանքային գրատախտակ, 2 ջեռուցման կաթսա, խոհանոցի համար մետաղական սեղան եւ խոտհնձիչ՝ բակային տարածքների մաքրման համար:

Իսկ ընթացիկ դրամաշնորհով, 940 հազար դրամի հատկացմամբ, իրականացվել են մանկական, գրասենյակային աթոռների եւ ջեռուցման կաթսայի վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել խաղալիքներ:

Ալվարդ Մանուկյան

ՓԱՌԱԿԱՆՔ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԾՈՎԻՆԱՐ

/սկիզբը՝ էջ 4-ում/

«Կամավն Աստծոյ ես Շահնատարս եւ կողակիցն իմ Իփակն ի գեղջեն Վաղաթնոյ կանկնեցաք Սուրբ Խաչս բարեխոս որդվոյ մերոյ էվազին. թվ 1661»:

«Կամավն Աստծոյ ես Մեհրապս որդի Խոշնատարին, գեղջեն Վաղաթնոյ, կանկնեցի Սուրբ Խաչս բարեխոս որդվոյ իմոյ Աստվածատուրին. թվ. 1664»:

«Այս է հանգիստ Մուսահիբին, որդի էխանին, գեղջեն Վաղաթնոյ թվ. 1688»:

«Այս է հանգիստ պարոն Լալին, որդի մելիք Տաթլուին, գեղջեն Գորէսոյ, եկեալ աստ եւ շինել տուն անգավ գերան ի գլխուն եւ մեռավ»:

Պարոն Լալը, որպես Վաղաթին գյուղին մոտիկ Գորէսից եկած մարդ, թաղվել է վաղաթնեցիների կողքին:

Բավականին հետաքրքիր տվյալներ են այս բնակավայրի գործունեության մասին հաղորդում գերեզմանաքարերին պահպանված մահվան թվականները, որոնք սկսվում են 13-րդ դարից ու ավարտվում 18-րդ դարով: Այսպես, Մանուչայի կողմից կանգեցված խաչքարը թվագրվում է 1273 թվականով, Մոճամի խաչքարը՝ 1708 թվականով: 1701 թվականին մահացել է Տեր Ավետիսի կին Հեղնարը, 1702 թվականին՝ նրա որդի Թաթէոսը:

Ու հետաքրքիր է, որ Փառականքում կյանքը շարունակվել է նույնիսկ պարսից Շահ Աբասի կողմից 1604-1605 թվականներին կազմակերպած մեծ բռնագաղթից հետո, ավել քան մեկ դար տեւողությամբ:

Ամենայն հավանականությամբ, այստեղ կյանքն ընդհատվել է 18-րդ դարի առաջին կեսերից, երբ պարտությամբ են ավարտվել Սյունիքում ու Արցախում հայերի կողմից բարձրացված ազատագրական շարժումները, իսկ լեզգիներն ու մահմեդական այլ ցեղերը ասպատակ են սփռել հայկական գավառներում, այդ թվում՝ Գեղարքունյաց գավառում:

Նույն այս հնավայրում, ավերակ մատուռի ու Մանուչայի շքեղ խաչքարի կողքին վեր է բարձրանում երկաթակուռ մի հուշարձան, որը հավերժացնում է Հայրենական մեծ պատերազմում զոհված Փառկունիքի կամ Կարմրաշենի 18 զավակների հիշատակը:

Հուշարձանը տեղադրվել է Փառակունքի կամ Կարմրաշենի զավակ, Մեծ հայրենականում զոհված Խաչիկ Գասպարյանի որդի Ռուբենի կողմից:

Փաստորեն, լեռների մեջ ծվարած այս գյուղը հայրենիքի պաշտպանության համար մի քանի տասնյակ զինվոր էլ է տվել, որոնցից 18-ը տուն չեն վերադարձել ռազմադաշտերից: Նրանք են՝ Խաչիկ եւ Գուրգեն Գասպարյանները, Գրիգոր, Դավիթ, Հայրիկ, Գվիդոն Աբրահամյանները, Նիկոլայ, Վանո Սահակյանները, Արտուշ, Արմենակ Գալստյանները, Բարեղամ Բարեյանը, Վանո Սաֆարյանը, Սոս եւ Միրզաջան Սարգսյանները, Գառնիկ Հակոբյանը, Անդրանիկ Խաչատրյանը, Մարտիրոս Կարապետյանը եւ Արմենակ Բարսեղյանը:

Պողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային մասում տարածվող պատմական գերեզմանոցն ընդարձակված է 1890 թվականին Ծովինարից Փառականքում վերաբնակություն հաստատած ու գյուղին նոր շունչ տված մարդկանց շիրիմներով, որոնց սերունդներն այժմ ապրում են Հայաստանի Հանրապետության այլ մարզերում կամ աշխարհի տարբեր վայրերում: Սակայն, ինչպես վկայում են Մեծ հայրենականում զոհվածների հուշարձանի տեղադրման ձեռնարկը եւ պահպանված-խնամված տեսք ունեցող շիրմաքարերը, նրանց հետնորդները չեն մոռացել իրենց պապերի շենը, իրենց արմատները, տառապանքով ու արարչագործությամբ կերտված պատմությունը, իրենց հոգիներում մայրական կաթի ու ծնողական սիրո պես սերմանված սրբավայրը:

Մեզ հաջողվեց նաեւ պարզել, որ Փառականք-Վերին Ծովինար-Կարմրաշեն բնակավայրից ընդամենը 1 ընտանիք է 1949 թվականին բնակության տեղափոխվել Մարտունու շրջանի Ծովինար գյուղ: Եվ դա եղել է Հրանտ Տոնոյանի ընտանիքը, ում որդի Սոսը կամ Նիկոլայը մինչ այժմ ապրում է՝ բոլորելով իր կյանքի 89 ամյակը: Սոսի հայրը զոհվել է Հայրենական մեծ պատերազմում, իսկ նա Ծովինար բնակության է եկել իր մոր՝ Ազիզի հետ:

Հայրենական մեծ պատերազմի զոհերի հուշարձանին Հրանտ Տոնոյանի անուն-ազգանունը գրված է մեկ այլ՝ Սոս Սարգսյան տարբերակով: Ի դեպ, Ազիզը մահացել է 1975 թվականին ու, իր պատգամով, ամփոփվել Վերին Ծովինարի գերեզմանատանը: Ու պատահական չէ, որ Ծովինարում Սոսին երկար տարիներ փաղաքշորեն անվանում են «Վերին գյուղի նախագահ», այն հաշվով, որ նա շարունակում է մարմնավորել Վերին Ծովինար-Փառականքի հիշողությունը:

Սոս Տոնոյանի հետ մեր հանդիպումը կայացավ իր տանը, ուշ երեկոյան: Նա վառ հիշում էր իր մանկությունը, անգամ՝ դպրոցական տարիները, երբ հաճախել է Կարմրաշենի կամ Վերին Ծովինարի յոթնամյա դպրոց:

-Ես Վերին գյուղում եմ ստացել յոթնամյա կրթություն: Շատ վառ եմ հիշում իմ ուսուցիչ Գարսեւան

Գաբրիելյանին, որ մեզ պատմություն էր դասավանդում: Սիմոնյան Արտաշին էլ եմ լավ հիշում:Դպրոցի շենքը իջնում էր դեպի ձորը: Հորս տարել էին պատերազմ, մորս հետ մնացել էինք ես ու քույրս: Հաց չէր ճարվում, մեր հիմնական սնունդը կարտոֆիլն էր, որը առատորեն ունեինք, քանի որ մեր բոստանում ցանում էինք: Քույրս հինգ տարեկան հասակում ծանր հիվանդացավ, նրա կյանքը չկարողացան փրկել, ու մնացինք ես ու մայրս: Երբ բնակվելու եկանք Ծովինար, արդեն ավարտել էի յոթնամյա դպրոցը, իսկ միջնակարգ կրթություն չկարողացա ստանալ, քանի որ դրա համար միջոց չունեինք: 15 տարի աշխատել եմ Մարտունու անտառտնտեսությունում, հազարավոր ծառեր տնկել ու խնամել: Հետո աշխատանքի եմ անցել Ծովինարի սովխոզում: Հենց այդ ժամանակ էր, որ անունս կնքեցին «Վերին գեղի նախագահ»: Սիլոս էինք բարձում մեր հին գյուղի տարածքից, ես կատակով ասացի, որ առանց իմ թույլտվության ոչ մի շյուղ կանաչ այստեղից չի տարվի, քանի որ այս գյուղի միակ տերը ես եմ մնացել: Ավելի քան 30 տարի էլ աշխատել եմ էլեկտրական ենթակայանում: Ամուսնացել եմ ծովինարցի Գեղեցիկ Օհանյանի հետ, համատեղ կյանքում ունեցել ենք 5 երեխա, 10 թոռ: Մայրս մահից առաջ պատգամեց, որ իրեն ամփոփենք Կարմրաշենի գերեզմանոցում, իր հինգ եղբայրների կողքին, ովքեր մահացել են երիտասարդ տարիքում: Իսկ ես միշտ կարոտով եմ հիշում մեր գյուղը, ամեն անգամ այցելելիս մի տեսակ մանկանում ու երջանկանում: Եկող փետրվարին կբոլորեմ կյանքիս ինը տասնամյակը, ու շատ գոհ, բավարարված եմ իմ ապրած կյանքով, իմ սերուդներով, այնքանով, որ մենք հանապազօրյա հացն աշխատել ենք մեր արդար քրտինքով,-պատմեց Սոս Տոնոյանը:

Հրաժեշտից առաջ Սոսն իր սենյակի պատից իջեցրեց, ընդունարան բերեց ու ցուցադրեց ռազմադաշտից այդպես էլ տուն չվերադարձած իր հոր լուսանկարը, որը մեծացրել, տեղադրել է շրջանակի մեջ եւ տասնամյակներ շարունակ այնքան պահպանում է ամենայն խնամքով:

Խոսրով Խլղաթյան

13.qxd 25/06/2025 17:10 Page 6

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԴԱՋԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ Հայաստանի նկարիչների միությունում տեղի են ունեցել «Խաղաղություն» միջազգային մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-ցուցահանդեսի եզրափակիչ ցուցադրությունն ու հաղթողների պարգեւատրման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Մրցույթ-ցուցահանդեսը միավորել է Հայաստանի եւ աշխարհի տարբեր երկրների՝ Եգիպտոսի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ուզբեկստանի, Թուրքիայի, Հունաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Իսպանիայի եւ Ավստրիայի ավելի քան 1500 շնորհալի երեխաների՝ երկու տարիքային խմբերում (մինչեւ 10 եւ 10–15 տարեկան), որոնք իրենց արվեստով փոխանցել են խաղաղության, համերաշխության եւ մարդասիրության կարեւորագույն արժեքները:

Մարտունի համայնքի Ներքին Գետաշենի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի հինգ աշակերտ անցել են մրցույթի եզրափակիչ փուլ, որոնցից երկուսը նվաճել են պատվավոր հորիզոնականներ: Ավագ խմբի առաջին մրցանակին արժանացել է Անգելինա Նավոյանը, իսկ կրտսեր խմբի երկրորդ մրցանակին՝ Արսինե Աբելյանը: Իսկ նույն դպրոցի սաներ Ելենա Բարսեղյանը, Մարկ Հակոբյանը եւ Ալյոնա Գրիգորյանը ստացել են պատվոգրեր եւ գրքեր: Նրանք նույն դպրոցի ուսուցչուհի, նկարիչ Նեկտար Սահակյանի ղեկավարած նկարչական խմբակի սաներն են:

«Գեղամա աշխարհ»

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԵՎԱՆԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ «ԱՌԱՔՍ» ԱԿՈՒՄԲԻ ԱՌԱՋՆԱԽԱՂԸ

Հունիսի 22–ին «Առաքս» ֆուտբոլային ակումբի հիմնադրման առթիվ Լճաշենի ֆուտբոլի մարզադաշտում ընկերական հանդիպումներ են անցկացվել Սեւանի մանկապատանեկան մարզադպրոցի «Սեւան», նորաստեղծ «Առաքս», Հրազդանի «Աղբյուրակ» եւ «Ախթալա» ֆուտբոլային ակումբների միջեւ:

Նորաստեղծ «Առաքս» ակումբը նպատակ ունի՝ հանդես գալ Հայաստանի առաջնություններում, Սեւանի տարածաշրջանի բոլոր բնակավայրերում զարգացնել մանկապատանեկան ֆուտբոլը, խրախուսել առողջ ապրելակերպը եւ պատանիների շրջանում բացահայտել լավ ֆուտբոլիստների՝ հետագայում նրանց ուղղորդելով ավելի մեծ բարձունքներ:

Բացի ակումբի հիմնադիր Արթուր Կարապետյանից, «Առաքս» ֆուտբոլային ակումբի ստեղծման ակունքներում է կանգնած նաեւ Մարտիկ Կարապետյանը, ով ապրում է Ռուսաստանի Դաշնությունում: Նորաստեղծ թիմին աջակցում են նաեւ բազմաթիվ անհատներ եւ կազմակերպություններ: Ավագ մարզիչն է Միքայել Բաբաջանյանը, մարզիչը՝ Կարեն Կարապետյանը, դարպասապահների մարզիչը՝ Արտյոմ Կարապետյանը:

«Առաքս» ֆուտբոլային ակումբի փոխնախագահ Աղաբեկ Դավթյանի խոսքով՝ անելու են հնարավորը, որպեսզի գյուղական բնակավայրերի պատանիների շրջանում հետաքրքրություն առաջացնեն ֆուտբոլ մարզածեւի նկատմամբ:

Վերջին օրերին ակումբը որոշ բարեկարգումներ է իրականացրել Լճաշենի մարզադաշտում:

«Առաքս»–ը սկզբնական շրջանում մարզումները կանցկացնի Լճաշենի մարզադաշտում, որտեղ էլ կայացել են առաջին ընկերական հանդիպումները: Մինչեւ խաղերի մեկնարկը հնչել է ՀՀ հիմնը եւ բարձրացվել ՀՀ պետական դրոշն ու «Առաքս» ակումբի դրոշը՝ ազդարարելով խաղերի մեկնարկը:

Չորս թիմերի ընկերական հանդիպումներից հետո թիմերը, լավագույն խաղացողներն ու մարզիչները պարգեւատրվել են պատվոգրերով, մեդալներով, գավաթներով եւ հուշանվերներով:

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի թիվ 1 եւ 2 մանկական երաժշտական դպրոցների սաները մրցանակներ են նվաճել վերջերս կայացած «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային 16-րդ մրցույթ-փառատոնում:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիսի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցի սան Լինա Հակոբյանը «Դաշնամուր» անվանակարգում դարձել է առաջին կարգի մրցանակակիր: Նույն հաստատությունից երկրորդ կարգի մրցանակակիր է դարձել Նարե Գաբոյանը, երրորդ կարգի մրցանակակիրներ՝ Զուլիետա Կարապետյանը եւ Ռիմա Սարիբեկյանը:

Վարդենիսի թիվ 2 մանկական երաժշտական դպրոցից առաջին կարգի մրցանակի է արժանացել Վահրամ Մկրտչյանը:

Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանն այս հաղթանակների առիթով ընդունել եւ շնորհավորել է Վարդենիսի թիվ 1 եւ թիվ 2 մանկական երաժշտական դպրոցների տնօրեններ Ահդա Սաղաթելյանին, Արեւիկ Ասատրյանին, մանկավարժներին եւ դպրոցի շնորհալի սաներին՝ նրանց խրախուսելով նվերներով:

Խոսրով Խլղաթյան

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱՄԱ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Գեղամա փողոցի հիմնանորոգման աշխատանքները: Գեղամա փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 69 միլիոն 954 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել քանդման, հողային, ճանապարհային պատվածքի, ուղիների եւ մուտքերի, մայթերի հիմնանորոգման, դիտահորերի պատերի ամրացման, կափարիչների, եզրաքարերի, եզրաշարերի, նոր մետաղական խողովակների տեղադրման, ջրամեկուսացման ու այլ կարգի աշխատանքներ: Հիմնանորոգվող ճանապարհի մակերեսը կազմելու է 3841 քառակուսի մետր:

Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Ճան-Շին» ՍՊԸ կապալառու կազմակերպության կողմից:

«Սեւան համայնքի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Գեղամա փողոցի հիմնանորոգման աշխատանքները հաջորդել են Սպանդարյան, Կարմիր բանակի, Օրբելի, Իսահակյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներին:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել այս տարվա ընթացքում:

Այս ծրագրի մյուս ենթածրագրերը ներառում են Սեւան քաղաքի Ռուսական, Աբովյան, Սայաթ-Նովա, Սյունյաց փողոցները, որոնց հիմնանորոգման մեկնարկը եւս կտրվի առաջիկայում:

Արմինե Ղուկասյան

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» ՄՐՑՈՒՅԹԱՌՄԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հայտարարած մշակութային կրթության տարվա շրջանակում անցկացվել է «Մշակութային վերջին զանգ» մրցույթը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված «Մշակութային վերջին զանգ» միջոցառումների մրցութային հանձնաժողովն ամփոփել է արդյունքները՝ ըստ սահմանված գնահատման սանդղակի: Ժյուրիի գնահատման հիման վրա յուրաքանչյուր մարզում, ինչպես նաեւ մայրաքաղաքում հաղթող է ճանաչվել երկու դպրոց:

Գեղարքունիքի մարզից այս մրցույթին հաղթող են ճանաչվել Կարմիրգյուղ գյուղի թիվ 2 միջնակարգ եւ Գավառի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցները:

«Մշակութային վերջին զանգ» մրցույթին դպրոցները մասնակցել են կամավորության սկզբունքով՝ ներկայացնելով համապատասխան հայտ մինչեւ 2025 թվականի մայիսի 29-ը ներառյալ: Հայտը ներառում էր միջոցառման ծրագիրը , 10 լուսանկար միջոցառումից, ինչպես նաեւ՝ մինչեւ 10 րոպեանոց տեսագրություն:

Հետգրություն-«Գեղամա աշխարհ» թերթը շնորհավորում է հաղթած դպրոցների տնօրիններին, ուսուցիչներին ու աշակերտներին, մաղթում հետագա հաջողություններ ու ձեռքբերումներ:

«Գեղամա աշխարհ»

13.qxd 25/06/2025 17:10 Page 7

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ «ԵՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱ-2025» ԾՐԱԳՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում ամփոփվել են «ԵՄ Կայուն էներգիա-2025» ծրագրի միջոցառումների շրջանակներում հայտարարված մրցույթների արդյունքները:

Արդեն ավանդական դարձած «ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ» ծրագրին Սեւան համայնքը 5-րդ անգամ է միացել: «Կայուն էներգիայի շաբաթվա» թեմային համահունչ նախապատրաստվել եւ անցկացվել են մի շարք միջոցառումներ, որոնց մեկնարկը տրվել է 2025 թվականի մայիսի 14-ին:

Սեւան համայնքում անցկացվել են շուրջ 20 միջոցառում եւ նախաձեռնություն, որոնց արդյուքներն ամփոփվել են հունիսի 19-ին:

Սեւանի Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոցի հարկի տակ հավաքվել են «ԵՄ Կայուն էներգիայի օրերի» մասնակիցները, մրցույթների հաղթողները, որոնց շնորհվել են համապատասխան մրցանակները:

Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանը շնորհակալություն է հայտնել բոլոր մասնակիցներին՝ կարեւորելով «ԵՄ Կայուն էներգիայի օրերի» անցկացումը եւ դրա նշանակությունը, ապա՝ ներկայացրել այն աշխատանքները եւ միջոցառումները, որոնք այս տարի մեկ ամսից ավելի անցկացվել են տարբեր հաստատություններում, կազմակերպություններում:

Սեւանի համայնքապետարանի կողմից պատվոգրեր եւ հուշանվերներ են ստացել այն կազմակերպությունները, հաստատությունները եւ անհատները, որոնք ցուցաբերել են նախաձեռնություն եւ հեղինակել տարբեր միջոցառումներ:

Շնորհակալագրերի են արժանացել մրցույթներին հայտ ներկայացրած եւ հաղթած երեխաների դասատուները: Նրանց եւս հանձնվել են հուշանվերներ:

Հավաստագրեր եւ հուշանվերներ են հանձնվել նաեւ Սեւան համայնքում մեկ ամսվա ընթացքում հայտարարված տեսանյութերի, նկարչական եւ լուսանկարչական աշխատանքների մրցույթներում լավագույն արդյունքներ ապահոված հեղինաներին:

Պարգեւատրված մասնակիցները ներկայացրել են իրենց աշխատանքները եւ շնորհակալություն հայտնել կազմակերպիչներին՝ իրենց աշխատանքը գնահատելու եւ հանրայնացնելու համար:

Նույն օրը Սեւանի Հովհաննես Այվազովսկու անվան արվեստի դպրոցում տեղի է ունեցել տարեվերջյան հաշվետու ցուցահանդես: Ճեմասրահում ցուցադրվել են ուսումնական տարվա ընթացքում ստեղծված նկարչական եւ ձեռագործ աշխատանքներ:

Ցուցահանդեսի ընթացքում դպրոցի տնօրեն Հ. Խանդանյանի կողմից պատվոգրեր են հանձնվել մրցույթներին մասնակցություն ունեցած եւ բարձր հորիզոնականներ զբաղեցրած աշակերտներին եւ մրցույթներին բարձր ցուցանիշներ ապահոված նկարչության դասատու Գայանե Գասպարյանին:

Ցուցահանդեսի ընթացքում համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի կողմից պատվոգիր է հանձնվել Հովհաննես Այվազովսկու անվան արվեստի դպրոցին՝ «ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ» միջոցառումներին ակտիվ մասնակցության եւ նախաձեռնության համար:

Շնորհակալագրեր են հանձնվել նաեւ նկարչական դասարանների դասավանդողներ Գայանե Գասպարյանին, Սյուզի Ավետիսյանին եւ Էմմա Գալստյանին:

Համայնքի ղեկավարի կողմից հավաստագրեր են հանձնվել նաեւ դպրոցի աշակերտներ Միշել Գրիգորյանին, Լաուրա Թովմասյանին, Սոնա Բաղալյանին, Լիլիթ Ղարիբյանին:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ԱՎԱՐՏԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Տեղի է ունեցել Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի վերջին՝ 5-րդ նիստը, որը վարել է Սեւան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Մարգարյանը:

Օրակարգային հարցերի հաստատումից հետո ներկայացվել է Սեւան համայնքում 2026 թվականին իրականացվող բնապահպանական ծրագրի բովանդակությունը, որով նախատեսվում է Սեւան համայնքի 2–րդ եւ 3–րդ միկրոթաղամասերի միջնամասում գտնվող Պրահա–Վինոր կոչվող այգու տարածքի ամբողջական բարեկարգում եւ կահավորում:

Համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է ներկայացված ծրագիրը:

Համայնքի ավագանու մեկ այլ որոշմամբ փոփոխվել է Սեւան համայնքի Ջովաբեր բնակավայրում գտնվող հողամասի նպատակային եւ գործառնական նշանակությունը:

Սեւան համայնքի ավագանին հերթական որոշմամբ «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամին եւ «Սեւան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել է տարածքներ՝ մեծահասակների եւ երեխաների վերականգնողական կենտրոնների գործունեությունը կազմակերպելու համար:

Ավագանու մեկ այլ որոշմամբ նախնական համաձայնություն է տրվել «ՌԵՄԼՈՒՔՍ» ՍՊԸ կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Լճաշեն բնակավայրում՝ Պլտինի փողոց 5/1 հասցեում, նախատեսված հանդիսությունների սրահի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը:

Ավագանին հաստատել է նաեւ Սեւան համայնքի կողմից 2025 թվականի ապրիլ-հունիս ամիսներին համայնքային սեփականություն հանդիսացող օտարված գույքի գույքագրման փաստաթղթերը:

Նիստի վերջում ներկայացվել եւ քննարկվել են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից հասցեագրված դիմումները, որոնց տրվել են սպառիչ պատասխաններ:

Համայնքի աշխատակազմի կողմից ներկայացվել են Սեւան քաղաքում հուլիս ամսին սպասվող իրադարձությունները. տեղի է ունենալու Սեւանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի նոր շենքի բացման արարողությունը, մեկնարկելու է «Թափոնների տեսակավորումը սկզբնաղբյուրում» ծրագրի գործնական փուլը, այն է՝ քաղաքում տեղադրվելու են տեսակավորման աղբարկղեր, քաղաքը ստանալու է հատուկ տրանսպորտային միջոց:

Սեւան համայնքի ավագանու 8-րդ նստաշրջանը կմեկնարկի սեպտեմբեր ամսին:

Արմինե Ղուկասյան

ԱՐԾՎԱՆԻՍՏԻ 20-ՐԴ ՓՈՂՈՅՈՒՄ ԳԱԶԱՏԱՐ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղի թիվ 4 եւ 24 փողոցներում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են մոտենում գազատարի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Արծվանիստի 20-րդ փողոցի գազատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 12 միլիոն 236 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է գազատարի կառուցում՝ 798 մետր երկարությամբ՝ վերգետնյա խողովակաշարով:

Ծրագրի իրականացման արդյունքում բնական գազով կապահովվեն 30-ից ավել տնտեսություններ:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի աշնանից ու 2025 թվականի հունիսի 18-ի դրությամբ գտնվում են ավարտակա փուլում:

Շինարարությունն իրականացրել է «Նանասե» ՍՊԸ-ն:

ԼԻՃՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՁՈՐՍ ՓՈՂՈՅ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2023 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են մոտենում Ա3 թաղամասի 13-րդ, Ա8 թաղամասի 1-ին, 4-րդ եւ 5-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Լիճքի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 52 միլիոն 218 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Լիճքի Ա3 թաղամասի 13-րդ, Ա8 թաղամասի 1-ին, 4-րդ եւ 5-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ՝ 1150 մետր ընդհանուր երկարությամբ եւ 4750 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մայիսի կեսերից եւ հունիսի 18-ի դրությամբ ավարտվել շուրջ 90 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ –Սեյրան» ՍՊԸ-ն:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ ԿՀԱՆԳՍՏԱՆԱՆ 240 ԴՊՐՈՑԱԿԱՆ

2025 թվականի հունիսի 20-ից մեկնարկել է «Դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպման ծրագիրը»:

Հունիսի 23-ին Գեղարքունիքի մարզից առաջին հերթափոխին Հանքավանի մանկական առողջարարական «Հասմիկ» ճամբար հանգստի են մեկնել 120 դպրոցական: Նրանց ուղեկցել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ոլորտի հարցերի վարչության սոցիալական ոլորտի մասնագետները:

Առաջին հերթափոխի հանգիստը կավարտվի հունիսի 29-ին, իսկ հանգստի երկրորդ հերթափոխի ժամկետը, դարձյալ նշված ճամբարում, սահմանված է հունիսի 29-ից հուլիսի 8-ն ընկած 10-օրյա ժամանակահատվածում, որի ընթացքում Գեղարքունիքի մարզից իրենց ամառային հանգիստը կվայելեն եւս 120 դպրոցական:

Ըստ ՀՀ Վարչապետի համապատասխան որոշման՝ «Ամառային հանգստի կազմակերպման ծրագրից» կարող են օգտվել զոհված, հաշմանդամություն ձեռք բերած, հաշմանդամություն ունեցող զինծառայողների եւ աշխարհազորայինների, ծնողազուրկ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ու անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող, անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված եւ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը «Պետական նպաստների մասին» օրենքով եւ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 185 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների ընտանիքների 7-13 տարեկան դպրոցահասակ երեխաներ՝ երկու հերթափոխով, 10-ական օրով:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

13.qxd 25/06/2025 17:10 Page 8

ՎԱՐԱԳԱ «ՊԱՐՈՆ ՊԵՏՐՈՍԸ»

Հերոսը նա չէ միայն, որ հրացանի ու փամփուշտի հետ գործ ունի,կամ կը նետվի արյունալի կռիվներու մեջ:

Հերոս է նաեւ նա, որ իր կյանքի գնովը կը պահպանե հայ ցեղի նյութական եւ հոգեկան գանձերը, կամ հայության կը նվիրե իր միտքը՝ հալեցնելով եւ սպառելով իր սեփական կյանքը:

Նման հերոս մըն էր Վարագայ վանքի հնամյա պահակը՝ «Պարոն Պետրոսը»՝ խիստ խոնարհ հերոս մը:

Ո՞վ չէր ճանչնար այդ հեզահամբույր, լռակյաց ու մշտաժպիտ ծերունին: Ո՞վ չէր վայելած անոր բարի հյուրընկալությունը, անոր հարազատ գորովանքը:

Ոչինչ ուներ սեփական: Այս կյանքեն նվեր ստացած էր միայն «Պարոն»՝իր անունեն անբաժան տիտղոսը եւ Խրիմյան Հայրիկի բոլորանվեր վստահությունը: Իրավ,պարոն մըն էր՝ մեղմ,բարեկիրթ եւ հոգով ազնվական:

Խրիմյան Հայրիրկի հասցուցած սերունդին վերջին մոհիկաններեն էր:Ու ատոր համար կես դարե ավելին ինքզինք բեւեռած էր երկգագաթ լերան կրծքին հանգչող Վարագա վանքին նվիրական քարերուն եւ լեռան ամեհի ժայռերուն, որոնք Վարագա լեռան եղնիկներուն հետ՝կենդանի էին անոր համար:

Վասպուրականի արծվաբույն վանքին անպաճույճ իշխանն էր նա: Բոլորն անխտիր՝վանահայր թե միաբան, աղա թե խոնարհ շինական անոր կը նայեին, անոր անբարբառ հրամանին կսպասեին: Իրեն վստահված սրբազան ավանդին արթուն պահակն էր:

Սուրբ մարդու անուն հանած էր:Հարգանք ու ակնածանք ունեին ոչ միայն վանքի բնակիչները, այլեւ քուրդն ու թուրքը՝ քաղաքեն եւ գյուղերեն: Բոլոր մարդիկ հավասար էին անոր աչքին: Կուսակալներու, քուրդ բեկերու հետ ճակատ ճակատի, հանդարտ, հավասարի մը պես կը խոսեր մեղմորեն:

Փոքրահասակ էր, շիկավուն ճերմկով խառնված պեխեր՝անոր տակ պահված իր մեղմանուշ բարի ժպիտով: Կապրեր վանքին ամենեն անշուք խուցի մէջ, կուտեր մշակներուն հետ՝ երբ դաշտը կերթար ու կը վերադառնար անոնց հետ:

Արշալույսին աչքի կանցըներ վանքին կենդանիները,բարի ժպիտով բարի լույս կըսէր ամենքին ու դանդաղ հոգսերուն կերթար:

Քաղաք կիջներ ժամանակ առ ժամանակ հոգաբարձուները տեսնելու եւ գնումներ ընելու, բայց կարծես փշերու վրա՝ իսկույն կը փութար վանքը...Ու 60 տարի այսպես:

Օր մը, երբ իջած էինք վանքին գոմերը, ըսի իրեն կատակով.

-Ա՛յ Պարոն Պետրոս, զարմանալի մարդ ես դուն, քաղաք կիջնես, գոնե քանի մը օր հոն կեցիր, մարդ տես, բան հասկըցիր, վայելիր...

-Ի՞նչ վայելեմ, ի՞նչ կա, որ հասկընամ... տխրությամբ պատասխանեց ինձի,- որքան հեռու մարդոցմե,այնքան լավ: Հայրիկը այս վանքը ավանդ ձգած է, իսկ դուռը միշտ բաց պիտի մնա, իսկ անցորդը պրտուճ մը հաց պիտի կտրե: Դու ձերը, ես էլ իմ պարտականությունները ունիմ...

Վանքին յուրաքանչյուր քար խորհուրդ մըն էր անոր համար, խոսուն ու կենդանի պատմիչ մը լուսավոր ու փառավոր անցյալեն:

Թանգարանին քով, շենքի երկրորդ հարկին վրա «Հայրիկի սենյակն» էր գոց, որ տասնյակ տարիներով կը մնար այնպես, ինչպես թողած էր Վարագա արծիվը: «Սէտրը»՝ երկար մահճի մը ձեւով, սեղանը, որուն վրա Հայրիկի ծխամորճերը, համրիչը եւ չորցած մելանի ամանը ժանգոտ գրիչին հետ թափթփված էին: Պարոն Պետրոսը չէր համարձակել ներս մտնալ եւ եղծել հատակի փոշին: Տարին անգամ մը, Հայրիկի տարեդարձին, կը բանար դուռը, կը կանգներ, տխուր ու անխոս պաշտամունքով սենյակի սեմին եւ կարծես տաճարի մը մէջ՝ երկյուղած աղոթք մը շրթունքին անշարժ:

Պարոն Պետրոսը ոչ մեկ կուսակցության կը պատկաներ. բոլոր կուսակցությունները իրեն կը պատկանեին՝ հարազատներ էին:

Վանքին դուռները կրունկի վրա բաց էին հեղափոխականներու համար:

Կառավարությունը խիստ կասկածանքով կը նայեր լեռան մեջ պահված այդ վանքին: Փորձած էր մի քանի զինվորներ պահել այնտեղ, բայց հրաժարած էր այդ մտքե՝ անախորժ պատահարներե խուսափելու համար...

Հեղափոխական մեր խումբերը շատ հաճախ անոր հովիտների մեջ զինավարժության եւ հրաձգութեան փորձեր կը կատարեին, կամ կը թափառեին «Ապարանջան» աղբյուրին, «Ծակ քարին» ժայռերու մէջ: Իսկ հաճախ էլ օրերով կը մնային վերին Վարագի ավերակներուն մեջ, կամ Ջառնապատի Ս.Գրիգորի վանքը ու ծովահայաց «Ջիաթռնուկ» լեռան գագաթին վրա, բայց վանք չէին մտնիր...

Վարագա Պարոն Պետրոսը անպայման պիտի գիտնար մեր այն կողմերը ըլլալը: Իր «թագավորության» սահմաններն էին: Այդ պարագային վանքի փռապան մեր երկու գաղտնի ընկերներու հետ ժամանակին կը ղրկեր մեր ուտելիքը: Ծրարված պաշարի մեջ Պարոն Պետրոսի խնամքի եւ գուրգուրանքի հետքերը կը տեսնեինք:

Երբեմն ալ, մանավանդ ձմեռ ատեն, վանքեն վար, բավական հեռու ձորի մէջ կիջնեինք վանքին գոմերը, ուր ախոռին կից, «սաքիվ»-ի ճակատի պուխերին կը տաքցներ մեր սառած մարմինը, կը չորցներ մեր հագուստները:

Օր մը միայն վտանգվեցավ վանքը: Մեր խումբերեն մեկը 1907-ի ամառը լեռ էր ելած ռազմափորձերու: Հավանաբար մատնիչի մը ցուցմունքով գիշերը զորքը հեռվեն պաշարած էր վերին Վարագա ավերակները եւ օղակը սեղմած: Մեր պահակը շատ ուշ նկատած էր: Արշալույսը բացված ատեն մերիններին նոր կը տեսնեն պաշարող զորքը: Խմբապետ Հարությունը կը կարգադրե քարե կիսափուլ պատերի ետեւ թաքնվիլ եւ սպասել իր հրամանին:

Զորքը Շյուքրի պեյ անունով սպայի առաջնորդությամբ, հավանաբար, դեռ ոչ բոլորովին վստահ, հուշիկ ու գաղտնապահ վեր կը սողա եւ կը մոտենա պատերուն: Այդ ատեն մերինները համազարկ կուտան ու կը սպաննեն քանի մը թուրք: Մնացեալները ահաբեկված ինքզինքը վար կը նետեն քարերեն: Առաջին զոհը իրենց ղեկավար սպան էր՝ Շյուքրին, որ ճակատեն գնդակ մը ստանալով՝ կիյնայ պատին տակ:

Շուշանցի հայտնի նշանաձիգ մըն էր զարնողը:Ժողովուրդը անոր գովքը երգեց:

Ահա երեք տող այդ երգից.

«Շյուքրին ելավ ահա վեր պատին,
Նշան ի զար կօ մէջ ճակտին,
Լէ,լէ,լէ Հայաստան....»:

Բայց սուղի նստավ մեզ այդ դեպքը:Հալածանք եւ բանտարկություններ լեռան ստորոտը գտնվող Կողպանց գյուղացիներու: Խուզարկվեցավ Վարագը, ձերբակալվեցավ Պարոն Պետրոսը՝ մեր փռապաններու հետ:

Բանտին մեջ նեղած էին խեղճ ծերունին՝ իրենց նպաստավոր ցուցմունքներ ստանալու հույսով:Պարոն Պետրոսը ժպիտը իր դեմքին անվրդով կերած էր իր ծեծը:

Դահիճ սպան հուսահատ պոռացեր էր երեսին.

-Խընզըր, բան մը ըսէ գոնե, խոսե, լեզուդ արմատեն կը քաշեմ, քեառաթա...

-Այդ ավելի գեշ,-հեգնած էր Պարոն Պետրոսը,-այն ատեն բոլորովին չպիտի կրնամ խոսիլ...

Ժանտարմեական սպան կոշիկի կրունկով խփած էր գլխուն, մեջքին: Միշտ անայլայլ մոլեռանդ սուրբի մը պես դիմացած էր:

-Խոսե, անզգամ, կը ղրկեմ, քանդել կուտամ վանքը,-սպառնացած էր սպան,-քէաֆիր էտէպսըզ, ֆետայիներ կը պահես, կերակուր կուտաս, հա՞...

Այդ ատեն խոսած էր Պարոն Պետրոսը մարգարեական գուշակի մը պես, աչքերեն բոցեր արձակելով.

-Չես համարձակիր քանդել այդ սրբավայրը, էֆենտի. ձեռքերդ կը չորնան, աչքերդ կը քոռնան եւ զավակներդ կը մեռնին. Ըզգույշ, չընես այդ....

Սպան սարսափեր էր խորհրդավոր շշուկով արտասանած խոսքերեն:

Երկար պահեցին բանտին մէջ: Կորսընցուցած էին բան մը հասկնալու հույսը:

Եվ օր մը, հեգնախառն ժպիտը դեմքին, կարծես տուներն կուգար: Եկավ մեզի այցի: Ոչինչ չուզեց պատմել բանտէն: Իսկ երբ մենք իր տառապանքի մասին ակնարկներ ըրինք, պատասխանեց.

-Ես ալ կուզեի անձովս ապրիլ այդ տառապանքը, երջանիկ եմ այժմ, որ ինձի եւս վիճակվեցավ կրել մեր ժողովուրդի ցավեն մաս մը...

***

1915-ին Վասպուրականի հայությունը հալածված թողեց երկիրը:

Վերջին անգամ Պարոն Պետրոսը համբուրեց արծվաբույնին քարերը, մեծ դարպասին դուռները եւ ցավագին հարկադրանքով մը բռնեց տարագրության ճամբան:

Բայց կամավորներուն հետ նա կրկին վերադարձավ հոն 1916-ին, երբ բարբարոս հորդաները քարը քարի վրա չէին թողած: Միանակն էր. կրքոտ քայլերով մոտեցավ, ծունկի եկավ լալով, անցավ ավերակներու մեջեն ու երկար -երկար մնաց հոն անշարժ ու սգավոր...

Նորեն նահանջի ահազանգը տրվեցավ, այս անգամ՝ անվերադարձ: Պարոն Պետրոսը զգաց, որ այլեւս կորավ իր կյանքի նպատակը, իր էության իմաստը:

Տարագիր բոլոր դժբախտները ցրված էին աշխարհի հովերուն: Պարոն Պետրոսն ալ քշվեցավ Եգիպտոս՝անհյուրընկալ ու այրող ավազներուն մեջ: Մաշված հոգի մը դարձավ, սպառած, մարող կերոն մը...

Ու օրեն մեկը, ամայի ծովեզերքե մը ինքզինքը ծովը նետեց ու կորավ ալիքներու մեջ...

Այսպես ան ուզեց սպաննել իր անհուն վիշտը...

ԿՈՄՍ /Վահան Փափազյան/
«ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍՆԵՐ»

ՀՈՎՀԱՆՆԵՍԱՊԱՏՈՒՄ

Երբ Հովհաննեսը բոլորել էր կյանքի ութսուն տարին, դեռեւս առույգ էր ու կենսախինդ, չէր ուզում բաժանվել հարազատ կոլեկտիվից, որտեղ անընդմեջ աշխատել էր 51 տարի նույն, անփոփոխ գրասեղանի վրա, չէր ուզում հաշտվել առաջացած տարիքի հետ: Լուրջ թե կատակ՝ սիրում էր կրկնել, որ ինքը ոչ թե ութսուն, այլ երկու քառասուն /երկուսը՝ ցածրաձայն, որ չլսվի/ տարեկան էր, ու հիշում էր Հ. Շիրազի «Ինձ ելնելու դարեր կան դեռ...»: տողերը:

Երախտագիտությամբ էր հիշում իր բոլոր կառավարիչներին՝ Պետրոս Պետրոսյան, Վեկդար Աբգարյան, Ցոլակ Խաչատրյան, Ռազմիկ Պետրոսյան, Էդիկ Նալբանդյան, Լազր Գալստյան եւ ուրիշներ, որոնք բոլորն էլ հարգել ու մեծարել են իրեն:

***

Հիմնարկի տարեկան հաշվետվությունը վերադասին հանձնելու առիթով Հովհաննեսը Երեւանում է լինում երեք օր, բայց ժամանակ չի գտնում սափրվելու: Չորրորդ օրը Նալբանդյան փողոցում, անթրաշ, հոգնած տեսքով հանդիպում է կնոջ եղբոր որդուն՝ Թաթոյան Սուրիկին: Վերջինս, որ բնակվում էր Երեւանում, հարցնում է.

- Աղաջան, ինչու ես անթրաշ ու տխուր:

-Սուրիկ ջան, էլ ինչ ես հարցնում, Մարգարիտ հորքուրդ մահացավ, բա ոնց սափրվեմ, ոնց տխուր չլինեմ:

- Վա՜յ, քոռանամ ես, հազար ափսոս, յոթը ե՞րբ է լինելու,-հարցնում է Սուրիկը:

- Յոթն էլ է եղել,-կատակը շարունակում Հովհաննեսը:

- Բա ո՞նց անենք, ինչպե՞ս մխիթարեմ:

-Մտքովդ անցնում է, արի՛, մտնենք էս դիմացի ռեստորան, դու քո խոսքը կասես,-առաջարկում էՀովհաննեսը:

Մտնում են, քեֆները լավացնում:

Սուրիկը չի կարողանում թաքցնել հուզմունքը.

- Շատ եմ ափսոսում, հորքուրս նեղ տարիներին մեզ շատ է օգնել, սովից փրկել է,- լացակումած ասում է նա:

Տեսնելով Սուրիկի վիճակը՝ Հովհաննեսը վրա է բերում.

- Բա որ հիմա հորքուրիդ կենդանի տեսնես, ինչքա՞ն կուրախանաս:

- Ա՜խ, երենի չէ՞ր:

-Դե արիացիր, Սուրիկ ջան, Մարգարիտը ողջ է, ես քո հոգին էի փորձեում:

Ու նրանք միասին շարունակում են արդեն ուրախության բաժակներ բարձրացնել:

***

Հովհաննեսը շատ էր սիրում գյուղի մեխանիզատորներին, նրանց հետ բաժակ բարձրացնում:

Մի անգամ տրակտորիստ Գուրգեն Ջուռնաչյանից վերցնում է նրա անձնագրի նկարը, սեւ ժապավենի հետ միասին փակցնում կոստյումին եւ շրջագայում Մարտունի քաղաքում:

Հարցնողներին ասում էր, թե Գուրգենը իր բարեկամն է, անժամանակ մահացել է եւ տխուր կեցվածք էր ընդունում: Շատերը մխիթարելու համար հրավիրում էին օղու եւ հացի սեղանի շուրջ:

Հավաքեց՝ Դարվին Հովհաննիսյանը

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի զինղեկի պաշտոնի թափուր տեղի համար:

Զինղեկի պաշտոնի համար նախատեսված վարձատվությունը որոշվում է ըստ դրույքի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

Դիմում (ձև 1),

1 լուսանկար՝ 3x4 չափսի,

Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

Անձը հավաստող փաստաթուղթ,

Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

Ինքնակենսագրություն (Ձև 5),

Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները, (դրանց առկայության դեպքում),

Մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստազորի սպայի կոչում և տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2025թ. հունիսի 25-ից մինչև հուլիսի 08-ը ներառյալ, ամեն օր ժամը 10: 00-ից մինչը 15: 00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. հուլիսի 11-ին, ժամը 14:00-ին, Մարտունու պետական բժշկական քոլեջում:

Հասցե՝ ք. Մարտունի, Նարեկացի 2/1, հեռախոս՝ (0262) 41330:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 25. 06. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: